ՍՄԿԿ XXVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

# ՍՐԱԿՅԱԼ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ՀՍՍՀ ՇԻՐԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՎԱՀԱԳՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*ՍՄԿԿ XXVII, ՀԿԿ XXVIII համագումարների որոշումներում հատուկ ընդգծվում է, որ մեր երկրի տնտեսական և սոցիալական հետագա առաջընթացը զգալի չափով կախված է արտադրության անձնական գործոնի դերի ու նշանակության բարձրացումից, մասսաների ստեղծագործական նախաձեռնության զարգացումից, արտադրության կառավարման պրոցեսում նրանց մասնակցության ակտիվացումից[1]։ Իսկ «կառավարելու համար պետք է ձեռնհաս լինել, հարկավոր է լիովին և մինչև մանրամասները գիտենալ այդ արտադրության տեխնիկան՝ նրա ժամանակակից բարձրությամբ, հարկավոր է ունենալ գիտական որոշ կրթություն»[2]։ Լենինյան այդ հիմնարար դրույթի իրականացման համար, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, կարևոր նշանակություն ունեն մեր երկրում անընդհատ կրթության միասնական համակարգի ստեղծումը, մասնագետների պատրաստման որակի բարձրացումը[3]։*

*Վերոհիշյալ պրոբլեմը ՍՍՀՄ առանձին ռեգիոնների սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, աշխարհագրական և զարգացման այլ առանձնահատկություններով պայմանավորված, տարբեր հանրապետություններում ունի դրսևորման իր յուրահատկությունները։ Օրինակ, Հայկական ՍՍՀ-ին վերջին քսանամյակում բնորոշ են եղել որակյալ աշխատուժի պատրաստման բարձր տեմպերը։ Բնակչության 1000 շնչի հաշվով ԲՈՒՀ-երում սովորողների համեմատական թվով մեր հանրապետությունը մշտապես առաջնակարգ տեղ է գրավել միութենական մյուս հանրապետությունների մեջ։ Այդ պատճառով էլ ներկայումս ՀՍՍՀ-ը բնութագրվում է ժողովրդական տնտեսության մեջ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների ամենաբարձր ցուցանիշով։*

*Պատկերը բոլորովին այլ է հանրապետության առանձին սոցիալ-տնտեսական շրջաններում։ Այսպես, Շիրակի տնտեսական շրջանը որակյալ աշխատուժի պատրաստման տեմպերով և ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների համեմատական թվով զգալիորեն զիջում է հանրապետության համապատասխան ցուցանիշներին։ Դա հիմնականում պայմանավորված է տնտեսական շրջանի տարածքում որակյալ կադրեր պատրաստող ուսումնական հաստատությունների սակավաթվությամբ և արդեն պատրաստված կադրերի տեղաբաշխման պրոցեսում տեղ գտած թերություններով։ Չնայած դեռևս ՀԿԿ XXVII համագումարում նշվեց, որ անհրաժեշտ է առաջնահերթ ուշադրություն դարձնել հանրապետության ողջ տարածքով մեկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՄՈՒՀ) և պրոֆտեխուսումնարանների (ՊՏՈՒ) ցանցի տեղաբաշխման կատարելագործման հարցին, և սակայն, անցած ժամանակաշրջանում այդ պրոբլեմի լուծման ուղղությամբ իրականացված գործնական քայլերը բավարար համարել չի կարելի։ Ճիշտ է, ժողովրդական տնտեսության զարգացման 11-րդ հնգամյակի տարիներին նման ուսումնական հաստատությունների ցանցում ընդգրկվել են Հայկական ՍՍՀ վարչական նորանոր շրջաններ, սակայն 1985 թ. դրությամբ էլ հանրապետության 37 վարչա-*

---

1 «Սովետական Հայաստան», 26. II. 1986, 25. I. 1986։

2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 259։

3 «Սովետական Հայաստան», 9. III. 1988։

կան շրջաններից ՊՏՈՒ-եր չկային 15, տեխնիկումներ և մյուս ՄՄՈՒՀ-եր՝ 18 վարչական շրջաններում[4]։

Ժողովրդական տնտեսությանն անհրաժեշտ որակյալ աշխատուժի պատրաստման ցանցի տեղաբաշխման խիստ անհամաչափությունը բնորոշ է ոչ միայն ամբողջ Հայկական ՍՍՀ-ին, այլև Շիրակի տնտեսական շրջանին։ Մասնավորապես, 1975/76 ուստարում տնտեսական շրջանի գրեթե բոլոր տեխնիկումները կենտրոնացված էին Լենինական քաղաքում, այստեղ էին գտնվում նաև բարձրագույն կրթությամբ կադրեր պատրաստող 2 ուսումնական հաստատությունները։ Պատկերը չի փոխվել 1979/80 և 1984/85 ուստարիների ընթացքում նույնպես։ Ներկայումս էլ Լենինականում են գտնվում նշված 2 ուսումնական հաստատությունները, շրջանում գործող ՄՄՈՒՀ-երի 80 և ՊՏՈՒ-երի 70%-ը։ Փաստացի տվյալները վկայում են, որ քննվող ժամանակահատվածում Շիրակի տնտեսական շրջանում ժողովրդական տնտեսությանն անհրաժեշտ որակյալ աշխատուժի պատրաստման ցանցն ունեցել է զարգացման դանդաղ տեմպեր։ Ավելին, վերջին հնգամյակում այդ ասպարեզում չի նկատվել համարյա ոչ մի դրական տեղաշարժ։ Տնտեսական շրջանի կազմի մեջ մտնող վարչական շրջաններից մեկը՝ Ղուկասյանի վարչական շրջանը, մինչև 1980 թ. զրկված էր սեփական կարիքների համար անհրաժեշտ որակյալ աշխատուժ պատրաստելու հնարավորությունից, իսկ մի քանի այլ շրջաններում այդ ցանցը ներկայացված էր մեկական ՊՏՈՒ-ով։ Ընդ որում, կադրերի պատրաստման ցանցի որոշ զարգացումը 1980-ական թվականներին հիմնականում պայմանավորված է եղել հենց ՊՏՈՒ-ների արագ աճով, որոնց թիվն այդ ժամանակահատվածում ավելացել է 1,5 անգամ։ Օրինաչափ է, որ տնտեսական շրջանի ՊՏՈՒ-ներում պատրաստվող որակյալ բանվորական կադրերի կազմն ու կառուցվածքը հիմնականում համապատասխանում է Շիրակի տնտեսական շրջանի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման պահանջներին և թելադրվում է դրանց ճյուղային կառուցվածքի առանձնահատկություններով։ Սակայն միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ բավարար չէ որոշ ՊՏՈՒ-ների մասնագիտացման աստիճանը։ Օրինակ, Լենինական քաղաքի 3 ՊՏՈՒ-ներ որակյալ աշխատուժ պատրաստում են ճիշտ նույն մասնագիտությունների գծով՝ խառատներ, ֆրեզերագործներ, փականագործներ։ Եվ դա այն դեպքում, երբ քիչ ուշադրություն է դարձվում շինարարական մասնագիտությունների գծով անհրաժեշտ որակյալ բանվորական կադրերի պատրաստմանը։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի իրականացմանն ուղղված կոնկրետ հարցերին վերաբերող որոշումներում հատուկ ընդգծվում է, որ հեռանկարում անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել գիտատեխնիկական հեղափոխության արդի պահանջներին համապատասխան բանվորական կադրերի պատրաստման պրոբլեմին։ Հարկ է նշել, որ այդ որոշումների կենսագործման ուղղությամբ Շիրակի տնտեսական շրջանում փոփոխություններ դեռևս չեն նկատվում։ 1979/80 ուստարում շրջանում գործող 19 ՊՏՈՒ-ներից միայն Լենինականի ռադիոտեխնիկական ուսումնարանում էին մասնագետներ պատրաստվում էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ ու ռադիոապարատներ կարգավորողների և ռադիոապարատներ մոնտաժողների մասնագիտությունների գծով։ Պատկերը չի փոխվել ժողովրդական տնտեսության զարգացման 11-րդ հնգամյակի տարիներին ևս։ 1986—1990 թթ. հնգամյա պլանով նախատեսվում է ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ առավել լայնորեն ներդնել հաշվողական տեխնիկա, մանիպուլյատորներ, ռոբոտատեխնիկա։ Նման միջոցառումներ է նախատեսված իրականացնել նաև Շիրակի տնտեսական շրջանի թեթև և շինանյութերի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններում[5]։ Այդ առա-

---

4 Այստեղ և ամենուր հաշվարկները կատարվել են ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության և Գրոֆտեխկրթության պետական կոմիտեի տվյալների հիման վրա։

5 «Սովետական Հայաստան», 26. I. 1986։

ծրագրանքներն իրենց անմիջական արտացոլումը պետք է գտնեն բանվորական կադրերի պատրաստման պլանների փոփոխության մեջ։ Հնգամյակի դիրեկտիվներով նախատեսվում է առանցքակալների գործարան կառուցել Թալինում[6], մինչդեռ ավանում գործող միակ ՊՏՈՒ-ն իր ուսումնաարտադրական բազայի և մասնագիտացման առանձնահատկությունների պատճառով ի վիճակի չէ անհրաժեշտ որակյալ աշխատուժով ապահովել այդ ձեռնարկությանը։ Ուրեմն հարկավոր է ստեղծել կա՛մ նոր ուսումնարան, կա՛մ ընդլայնել և անհրաժեշտ մասնագետներով համալրել արդեն գործող պրոֆտեխուսումնարանը։ Որակյալ աշխատուժի կառուցվածքի փոփոխության կարիք ունեն տնտեսական շրջանի նաև մյուս ՊՏՈՒ-ները, որոնք շարունակում են բանվորական կադրեր պատրաստել հին ծրագրերով։

Վերջին տարիներին տնտեսական շրջանի առանձին վարչական շրջաններում պրոֆտեխուսումնարանների բացարձակ թիվն աճել է։ 11-րդ հնգամյակում հանրապետությունում ստեղծված նոր պրոֆտեխուսումնարանների 1/5-ը բաժին է ընկել Շիրակի տնտեսական շրջանին։ Որպես դրական երևույթ պետք է նշել նաև այն փաստը, որ աճել է նաև գրանցում սովորողների հարաբերական թիվը և, ընդհակառակը, Լենինականի պրոֆտեխուսումնարաններում սովորողների հարաբերական թիվը ցուցաբերել է նվազման միտում։ Այսպես, եթե 1979/80 ուստարում Լենինականի ՊՏՈՒ-ներում էր սովորում տնտեսական շրջանի բոլոր սովորողների 61%-ը, ապա 1984/85 ուստարում՝ 59%-ը։ Սակայն 1979/80—1984/85 ուստարիներին Շիրակի տնտեսական շրջանի ՊՏՈՒ-ներում սովորողների բացարձակ թիվը կրճատվել է։ Դա պայմանավորված է նրանով, որ 1984 թ. վերացվեց տեխնիկական ուսումնարաններում սովորողներին զինվորական ծառայությունից ժամանակավորապես ազատելու նախկինում գործող կարգը։ Վերոհիշյալ պարագան ՊՏՈՒ-ներին հնարավորություն ընձեռեց ազատվելու սովորողների պատահական այն կոնտինգենտից, որի առաջնային նպատակը ոչ թե բանվորական մասնագիտություն ձեռք բերելը, այլ ԲՈՒՀ ընդունվելն էր։ Անցած տասնամյակում ՊՏՈՒ-ները և տեխնիկական այլ ուսումնարանները շրջանի ժողովրդական տնտեսությանը տարեկան միջին հաշվով տվել են 5000 որակյալ բանվորական կադրեր։

Քննվող ժամանակահատվածում էական փոփոխություններ չեն նկատվել տեխնիկումների և այլ ՄՄՈՒՀ-երի ցանցի զարգացման գործում։ Միաժամանակ, ինչպես և նախկինում, գրանք հիմնականում տեղաբաշխված են եղել Լենինականում։ Այդուհանդերձ, այս ցանցում նույնպես առկա է պրոֆտեխկրթության ոլորտում դրսևորվող ընդհանուր միտումը, այն է՝ ուսանողների ընդհանուր թվի մեջ Լենինականի բաժնի կրճատումը և, ընդհակառակը, վարչական մյուս միավորների բաժնի աճը։ Օրինակ, եթե 1975/76 ուստարում Լենինականին բաժին էր ընկնում տնտեսական շրջանի տեխնիկումներում սովորողների 90%-ը, ապա հետագա տարիներին այն կրճատվել և 1979/80 ուստարում կազմել է 88, իսկ 1984/85 ուստարում՝ արդեն 75%։ 1975—1985 թթ. Շիրակի տնտեսական շրջանում կառուցվել է ընդամենը 1 նոր ՄՄՈՒՀ՝ Ախուրյանի վարչական շրջանում։ Գլխավորապես հենց դրանով էլ պայմանավորված է այդ ընթացքում ՄՄՈՒՀ-երում սովորողների թվի որոշակի աճը՝ 1,2 անգամ։ 1975/76—1984/85 ուստարիների ընթացքում տնտեսական շրջանի տեխնիկումները և մյուս ՄՄՈՒՀ-երը շրջանի ժողովրդական տնտեսությանը տարեկան միջին հաշվով տվել են 2000 մասնագետ։

Արտագրության միջոցների հանրային սեփականության պայմաններում հասարակությունն ի վիճակի է աշխատուժի, հատկապես որակյալ աշխատուժի պլանաչափ վերաբաշխման միջոցով բավարարելու այս կամ այն մասնագիտության կադրերի նկատմամբ ճյուղի կամ տերիտորիալ միավորի պահանջը։ Դա ժողովրդական տնտեսության ճյուղային և տերիտորիալ առանձին միավորների մասնագիտացման խորացման, հորիզոնական և ուղղաձիգ կոոպերացման դրսևորումներից է։ Սակայն բանն այն է, որ ՄՄՈՒՀ-երի ցանցի զարգացման ոչ

6 Նույն տեղում։

բավարար մակարդակը բնորոշ է ողջ Հայկական ՍՍՀ-ին։ Այսպես, 1984/85 ուստարում հանրապետության ԲՈՒՀ-երում սովորող յուրաքանչյուր մասնագետի բաժին էր ընկնում ՄՄՈՒՀ-երում սովորող 8,85 մասնագետ։ Ճիշտ է, անցած ժամանակաշրջանի որոշ հատվածներում այդ ոչ ռացիոնալ հարաբերակցության վերացման ուղղությամբ որոշ քայլեր կատարվել են, սակայն դրությունը շտկելու համար նման տեմպերը բավարար չեն։ Ավելին, վերջին տարիներին ավելի ընդգծված ձևով է սկսել դրսևորվել նախկին միտումը։ Օրինակ, եթե 1970/71 ուստարում բնակչության 1000 շնչի հաշվով տեխնիկումներում և մյուս ՄՄՈՒՀ-երում սովորողների թվով Հայաստանը միութենական մյուս հանրապետությունների մեջ գրավում էր երրորդ տեղը, ապա 1984/85 ուստարում վիճակն ավելի է վատացել և ՀՍՍՀ-ն արդեն գրավում է ութերորդ տեղը։ Ընդորում, այդ ցուցանիշը 185-ից իջել է մինչև 143 մարդու։ 1975/76-1984/85 ուստարիներին ՀՍՍՀ տեխնիկումներում և այլ ՄՄՈՒՀ-երում սովորողների թիվը նվազել է նաև բացարձակ մեծությամբ։

Շիրակի տնտեսական շրջանը սեփական ուժերով իր պահանջները բավարարում է միայն մանկավարժական և ինժեներական կադրերի գծով, իսկ ժողովրդական տնտեսությանն անհրաժեշտ բարձրագույն կրթությամբ մյուս մասնագետներին ստանում է պլանաչափ բաշխման կարգով։ Նախորդ տարիներին տնտեսական շրջանում բարձրագույն կրթություն ստացող կադրերի թիվն աճել է անհամեմատ ավելի արագ տեմպերով, քան տեխնիկումներում և մյուս ՄՄՈՒՀ-երում սովորողների թիվը, այսինքն՝ շրջանում դրսևորվել է ամբողջ հանրապետությանը բնորոշ միտվածությունը։ 1975/76—1984/85 ուստարիներին տեղի ԲՈՒՀ-երում սովորողների թիվն աճել է գրեթե 1,5 անգամ, այն դեպքում, երբ տեխնիկումներում և մյուս ՄՄՈՒՀ-երում սովորողների թիվը՝ ընդամենը 1,2 անգամ։

Քննվող ժամանակահատվածում տնտեսական շրջանում բարձրագույն կրթություն ստացող կադրերի կառուցվածքը որոշակի փոփոխություններ է կրել։ Եթե 1974/75 ուստարվա ընթացքում Շիրակի տնտեսական շրջանում պատրաստվող մանկավարժական և ինժեներական կադրերի հարաբերակցությունը կազմել է մոտավորապես 1:1, ապա ներկայումս պատկերը փոխվել է։ 1984/85 ուստարում շրջանում պատրաստվող յուրաքանչյուր մանկավարժին բաժին է ընկել 3 ինժեներ։ Դեռ ավելին. նույն ժամանակամիջոցում մանկավարժական ինստիտուտում սովորողների թիվը կրճատվել է նաև բացարձակորեն։ Դա հանրապետության մանկավարժական թեքումով մյուս ԲՈՒՀ-երում ծայրամասային շրջանների համար մանկավարժական կադրեր պատրաստելու գործում ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից վերջին տարիներին ցուցաբերած խիստ տարբերական քաղաքականության, շրջանի՝ մանկավարժական կադրերով ապահովվածության աստիճանի բարձրացման արդյունք է։

Կուսակցության ծրագրի նոր խմբագրությունում նշվում է, որ որակյալ աշխատուժի պատրաստման համակարգը պետք է զգայուն կերպով արձագանքի արտադրության, գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին[7]։ Արտադրողական ուժերի երկու տարրերի՝ աշխատուժի և արտադրության միջոցների անընդհատ զարգացումն ու կատարելագործումը միասնական օրինաչափ պրոցես են, որի ընթացքում բարդանում է տեխնիկան և դրանով իսկ աշխատողից պահանջում որակական մակարդակի համապատասխան բարձրացում։ Ընդսմին, որակյալ աշխատուժի բնութագիրը որոշող մեկ այս մեկ այն տարրի առաջին պլան մղվելու հետևանքով ինքը՝ որակավորման բովանդակությունը, որոշակի ձևափոխություններ է կրում։ Գիտատեխնիկական հեղափոխության հետ կապված որակավորման բովանդակության փոփոխությունը մասնավորապես արտահայտվում է նրանում, որ աշխատուժի բարձրագույն որակավորման վճռական հատկանիշ է դառնում ոչ այնքան տվյալ գործողության բարդությունը, որքան այդ գործողությունն իրականացնելու համար օգտագործվող սարքավորումը սպասարկելու, այն կառավարելու բարդությունը։ Ներկայումս Երևանի

7 Նույն տեղում, 7. III. 1986։

պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղն ինժեներական կադրեր է պատրաստում գլխավորապես թեթև արդյունաբերության կարիքների համար, ընդ որում 11 մասնագիտությունների գծով պատրաստվող կադրերից 9-ը նախատեսված է տեքստիլ արդյունաբերության՝ շրջանի ավանդական ճյուղի համար։ Անցած տասնամյակում բարձրագույն կրթություն ստացող կադրերի կառուցվածքում ոչ մի դրական տեղաշարժ չի նկատվել։ Դրանք շարունակվում են պատրաստվել հաշվի չառնելով գիտատեխնիկական առաջադիմության արդի պահանջները։ Տնտեսական շրջանի ԲՈՒՀ-երում, իսկ անհրաժեշտ է նշել, որ միայն Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (ԵՊԻ) Լենինականի մասնաճյուղում սովորում է այդ ԲՈՒՀ-ի ամբողջ ուսանողության ավելի քան 15%-ը, մինչև օրս ոչ մի մասնագետ չի պատրաստվել թեթև արդյունաբերության մեջ արտադրական պրոցեսների կառավարման, ավտոմատացման, ռադիոկապի ապահովման և ժամանակակից այլ մասնագիտությունների գծով։ Մինչդեռ քննվող ժամանակահատվածում Հայկական ՍՍՀ ԲՈՒՀ-երում վերոհիշյալ մասնագիտությունների գծով սովորողների թիվն աճել է ամենաբարձր տեմպերով։ Վերը նշված մասնագիտությունների գծով կադրերի պակասի պրոբլեմն առավել սրությամբ կդրսևորվի ընթացիկ հնգամյակում, որովհետև նրա առաջադրանքներով նախատեսվում է նորագույն տեխնիկայով վերազինել, հաշվողական տեխնիկա ներդնել շրջանի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում։

Խնդրո առարկա հարցի լուծման կարևոր ուղիներից մեկը Շիրակի շրջանի այդ ԲՈՒՀ-ը համապատասխան մասնագիտությունների բարձրորակ մանկավարժական կադրերով ապահովելն է։ Որ այդ պրոբլեմը ենթակա է անհապաղ լուծման, կարող են վկայել հետևյալ տվյալները. 1974/75 ուստարում ԵՊԻ-ի Լենինականի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմում կար գիտության ընդամենը 1 դոկտոր և 13 թեկնածու, 1984/85 ուստարում՝ 1 դոկտոր և 17 թեկնածու, այսինքն գրեթե նույնքան, որքան մանկավարժական ինստիտուտում՝ համապատասխանաբար 1 դոկտոր և 15 թեկնածու, ուր ուսանողների թիվը համարյա 3 անգամ ավելի քիչ էր։ Եվ դա այն դեպքում, երբ Լենինականում աշխատում են գիտության 10 դոկտորներ և 250 թեկնածուներ։ Այլ կերպ ասած, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղն անհրաժեշտ որակավորում ունեցող դասախոսական կադրերով ապահովելու պոտենցիալ հնարավորություններն առկա են։

1975-1985 թթ. ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բարձրագույն կրթությամբ մասնագետների աճի տեմպերով Շիրակի տնտեսական շրջանը գերազանցել է հանրապետության միջին ցուցանիշները։ Փաստացի թվերը վկայում են, որ բարձրագույն կրթությամբ մասնագետներն առավել արագ տեմպերով ավելացել են տնտեսական շրջանի հեռավոր շրջաններում, մի երևույթ, որ չի կարելի դրական չհամարել։ Մյուս կողմից հատկանշական է, որ Շիրակի վարչական գրեթե բոլոր շրջաններում վերոհիշյալ մասնագետների թիվն անհամեմատ ավելի արագ է աճել, քան տնտեսական շրջանի կենտրոն Լենինական քաղաքում։ Դրա շնորհիվ վարչական շրջանների բաժինն ամբողջ տնտեսական շրջանում զբաղված բարձրորակ աշխատուժի կազմում անշեղորեն աճել է, մինչդեռ Լենինականի բաժինը՝ նվազել։ Այսպես, եթե 1975 թ. Շիրակի վարչական 6 շրջաններին, առանց Լենինական քաղաքի, բաժին էր ընկնում ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բարձրագույն կրթությամբ կադրերի 43,6%-ը, իսկ 1977 թ.՝ 45,5%-ը, ապա 1984 թ. արդեն՝ 56,1%-ը։ Վերոհիշյալ օրինաչափությունը ցայտունորեն դրսևորվել է Շիրակի վարչական բոլոր շրջաններում։ Բացարձակ թվերի աճն ուղեկցվել է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող կադրերով ժողովրդական տնտեսության ապահովվածության աստիճանի բարձրացումով։ Նշված պրոցեսը, առանց բացառության, բնորոշ է եղել վարչական բոլոր շրջաններին, ըստ որում 1975 թ. այն ամենաբարձրն է եղել Ախուրյանի շրջանում՝ 227 մարդ (1000 բանվոր-ծառայողի հաշվով) և ամենացածրը Ղուկասյանի շրջանում՝ 115 մարդ։ 1984 թ. պատկերը չի

փոխվել. Ղուկասյանի շրջանը մնացել է նույն, վերջին տեղում՝ 176 մարդ, իսկ Ախուրյանի վարչական շրջանը բարձրորակ աշխատուժով ապահովվածության տեսակետից գտնվել է մոտավորապես նույն մակարդակի վրա, ինչ-որ Արթիկի և Անիի վարչական շրջանները՝ համապատասխանաբար 245, 246 և 259 մարդ (1000 բանվոր-ծառայողի հաշվով)։ Լենինական քաղաքում, ճիշտ է, նշված ժամանակահատվածում նույնպես ավելացել է ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բարձրորակ մասնագետների բացարձակ թիվը, սակայն համեմատական ցուցանիշներով քաղաքը զիջում է ոչ միայն հանրապետության միջին ցուցանիշներին (1975 թ. Լենինականում այն կազմել է 170 մարդ, մինչդեռ ՀՍՍՀ-ում ամբողջությամբ վերցրած՝ 217 մարդ, իսկ 1984 թ.՝ համապատասխանաբար 202 և 270 մարդ), այլ նաև Շիրակի տնտեսական շրջանի վարչական գրեթե բոլոր շրջաններին։ Այստեղ տեղին է նկատել, որ վերոհիշյալ ցուցանիշի ձևավորման վրա կարևոր ազդեցություն են ունենում օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնք պայմանավորված են տվյալ տերիտորիալ միավորի զարգացման առանձնահատկություններով։ Մասնավորաբար, Շիրակի վարչական առանձին շրջաններում Լենինականի համեմատությամբ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերով ապահովվածության ավելի բարձր աստիճանը նախ և առաջ պայմանավորված է վերջիններիս ժողովրդագրական զարգացման առանձնահատկություններով, այն հանգամանքով, որ դրանց բնակչության ընդհանուր թվում չափազանց բարձր է երեխաների տեսակարար կշիռը։ Դա իր հերթին հանգեցնում է նախադպրոցական և դպրոցական հաստատություններում ընդգրկված մանկավարժական կադրերի բավականին մեծ թվին։ Այդ են վկայում հետևյալ փաստացի տվյալները. եթե 1984 թ. Լենինականում 1000 բնակչին բաժին էր ընկնում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ 19 մանկավարժ, ապա Անիի շրջանում՝ 33, Ղուկասյանի շրջանում՝ 42, Ամասիայի շրջանում՝ 34 մանկավարժ և այլն։ Վերոհիշյալ երևույթը պայմանավորող երկրորդ գործոնն այն է, որ վարչական շրջանների համար հաշվարկը կատարելիս ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների թվում հաշվի չի առնված կոլտնտեսականների թիվը, մինչդեռ վարչական բոլոր շրջաններում էլ նրանց բաժինը գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվում բավականին բարձր է։ Ամբողջ բնակչության 1000 շնչի հաշվով վերոհիշյալ ցուցանիշը հաշվարկելիս պարզվում է, որ չնայած Լենինականը դարձյալ զիջում է հանրապետական միջին ցուցանիշին (107 մարդ) սակայն միջանկյալ դիրք է գրավում տնտեսական շրջանի վարչական միավորների մեջ (67 մարդ)։ Լենինականի ցուցանիշներն էլ հենց վճռական դեր են խաղացել այն գործում, որ ամբողջ Հայկական ՍՍՀ-ի համեմատությամբ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետներով Շիրակի տնտեսական շրջանի ապահովվածության աստիճանը 1975—1984 թթ. չի փոխվել և կազմել է 0,8։

Շրջանի ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքում և ժողովրդագրական զարգացման մեջ տեղի ունեցած փոփոխությունները համապատասխան փոփոխություններ են առաջացրել բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերի կառուցվածքում։ Փաստացի վիճակագրական տվյալները վկայում են այդ տնտեսական շրջանի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բարձրորակ կադրերի կառուցվածքում տեղի ունեցած որակական տեղաշարժերը։ Այսպես, եթե 1975 թ. շրջանում զբաղված բարձրագույն կրթությամբ կադրերի ավելի քան 60%-ը բաժին էր ընկնում մանկավարժական և հարակից մասնագիտություն ունեցող կադրերին, ապա 1984 թ. նրանց բաժինը զգալիորեն նվազել և կազմել է 46%։ Շիրակի տնտեսական շրջանի ինդուստրիալ զարգացման տեմպերի արագացումը հանգեցրել է նրան, որ ավելացել է ժողովրդական տնտեսության մեջ զբաղված ինժեներների տեսակարար կշիռը (23,6-ից այն հասել է 32,1-ի)։ Մասնագետների այս երկու խմբերի մեջ միջանկյալ դիրք են գրավում բժշկական, գյուղատնտեսական և հասարակագիտական մի շարք մասնագիտությունների (հիմնականում տնտեսագիտական) ոլորտի կադրերը, որոնց բաժինը զբաղվածների ընդհանուր կազմում համարյա

չի փոխվել։ Սակայն, եթե գյուղատնտեսական և տնտեսագիտական մասնագիտությունների գծով կադրերի բաժնի կայունացման նման միտումը ինչ-որ տեղ օրինաչափ է և արդյունք է վերոհիշյալ մասնագետներով ժողովրդական տնտեսության պահանջների բավարարման մակարդակի բարձրացման, ապա բժիշկների տեսակարար կշռի կայունացումը բնավ նորմալ երևույթ չի կարելի համարել։ Չէ որ բնակչության 1000 շնչի հաշվով բժիշկներով ապահովվածության տեսակետից Շիրակի տնտեսական շրջանը գտնվում է մոտավորապես նույն մակարդակի վրա, ինչ Սևանի տնտեսական շրջանը, բայց 2,5 անգամ զիջում է հանրապետական միջին ցուցանիշին, որն իր հերթին բավականին ցածր է միութենական միջինից։ Անկասկած միշտ չէ, որ նպատակահարմար և անհրաժեշտ է առանձին շրջանների զարգացման ցուցանիշները մոտեցնել կամ հավասարեցնել ամբողջ ռեգիոնի համապատասխան ցուցանիշին։ Նման դեպքերում հարկավոր է հաշվի առնել ընդհանուրի, հատուկի և եզակիի զարգացման առանձնահատկությունները։ Սակայն կոնկրետ այս դեպքում, կարծում ենք, որ նման մոտեցումը օրինաչափ է և տրամաբանական, քանզի Շիրակի տնտեսական շրջանում բժշկական սպասարկման ոչ բավարար մակարդակը այն հիմնական պատճառներից մեկն է, որ հանգեցրել է բացասական մի շարք սոցիալ-տնտեսական երևույթների, այդ թվում բնակչության ինտենսիվ շարժին դեպի այլ շրջաններ։

ՍՄԿԿ XXVII համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված Քաղաքական զեկուցման մեջ նշվում է, որ անհրաժեշտ է վերանայել բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կառուցվածքը[8]։ Խոսքն առաջին հերթին բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերի հարաբերակցության բարելավման մասին է. այն ներկայումս ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ կազմում է 1:1,2 և հեռու է իր օպտիմալ մակարդակից[9]։ Վերոհիշյալ ցուցանիշը բարելավման կարիք ունի նաև Հայկական ՍՍՀ-ում և Շիրակի տնտեսական շրջանում։ Նշված ցուցանիշը շրջանում համեմատաբար ավելի ցածր է, քան ամբողջ հանրապետությունում. օրինակ, եթե ՀՍՍՀ-ում 1975-1984 թթ. այն չի փոփոխվել և կազմել է 1:0,8, ապա Շիրակի շրջանում նույն թվականներին եղել է 1:1,1։ Շրջանի վարչական 6 շրջաններից 4-ում՝ Ախուրյանի, Ամասիայի, Անիի և Արթիկի շրջաններում նույն ժամանակահատվածում ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բարձրագույն կրթությամբ կադրերի աճի տեմպերը գերազանցել են միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերի աճի տեմպերին։ Այդուհանդերձ, ներկայումս էլ նրա գրեթե բոլոր վարչական միավորներում (բացառությամբ Լենինականի և Ամասիայի շրջանի) վերոհիշյալ հարաբերակցությունը ավելի ցածր է, քան ամբողջ հանրապետությունում։ Սակայն այս կամ այն սոցիալ-տնտեսական երևույթը գնահատելիս բացարձակ, երբեմն համեմատական ցուցանիշներն էլ չեն կարող ամբողջական պատկերացում տալ տվյալ երևույթի մասին։ Դրանք բաղդատելիս անհրաժեշտ է հաշվի առնել վարչական առանձին միավորների տնտեսության մեջ զբաղվածների կազմը, տնտեսության ճյուղային կառուցվածքն ու զարգացման յուրահատկությունները և բազմաթիվ այլ գործոններ։ Այլ կերպ ասած, Շիրակի տնտեսական շրջանում ձևավորված նշված հարաբերակցությունը հանրապետության, առավել ևս միութենական համապատասխան ցուցանիշին անպայմանորեն հավասարեցնելու օբյեկտիվ անհրաժեշտություն գոյություն չունի։

Շրջանում զբաղված բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերի հարաբերակցության վրա ուղղակի ազդեցություն է թողել համապատասխան ուսումնական հաստատություններում սովորողների միջև եղած հարաբերակցությունը։ 1960-ական թվականներից առ այսօր հանրապե-

---

8 Նույն տեղում, 26. II. 1986։

9 Սովետական տնտեսագիտական գրականության մեջ լայնորեն տարածված տեսության համաձայն օպտիմալ է համարվում 1:3 հարաբերակցությունը։ Այդ մասին տե՛ս, օրինակ, Վ. Ե. Խոջաբեկյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան, 1976, էջ 296, 297։

տության ԲՈՒՀ-երում սովորողների թիվը մշտապես գերազանցել է տեխնիկումներում և այլ ՄՄՈՒՀ-երում սովորողների թվին, մինչդեռ Շիրակի տնտեսական շրջանում, ընդհակառակը, գրեթե միշտ էլ միջնակարգ մասնագիտական կրթություն ստացողների թիվը գերազանցել է բարձրագույն կրթություն ստացողների թվին։ Շրջանում նման հարաբերակցությունը պայմանավորող հաջորդ գործոնը նրա տնտեսական զարգացման առանձնահատկությունն է։ Շիրակի տնտեսական շրջանն ինդուստրիալ զարգացման տեսակետից զիջում է հանրապետության արդյունաբերական զարգացման ընդհանուր մակարդակին, իսկ հայտնի է, որ բարձրորակ մասնագետներն առաջին հերթին զբաղված են հենց այդ ճյուղում։

Ամասիայի վարչական շրջանում վերոհիշյալ հարաբերակցության ձևավորման վրա ուղղակի ազդեցություն է թողել նրա ժողովրդագրական զարգացման առանձնահատկությունը, այն հանգամանքը, որ բնակչության ընդհանուր թվում չափազանց բարձր է երեխաների, այդ թվում դպրոցական տարիքի երեխաների տեսակարար կշիռը (այդ ցուցանիշով նա վարչական մյուս միավորներին գերազանցում է 1,4-2 անգամ), որ հանգեցրել է զբաղված մանկավարժական կադրերի մեծ թվին։ Ինչ վերաբերում է Լենինականին, ապա նշենք, որ նման երևույթն այստեղ հիմնականում արդյունք է բարձրորակ կադրերի բաշխման և վերաբաշխման պրոցեսում տեղ գտած թերությունների։ 1984 թ. քաղաքում ըղբաղված միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերի թիվը հավասար էր բարձրագույն կրթություն ունեցողների թվին։ Ընդսմին այդ բացասական երևույթը սկսել է դրսևորվել վերջին ժամանակաշրջանում։ Լենինականում կենտրոնացած բարձրագույն կրթություն ունեցող կադրերի որոշ մասի պլանաչափ վերաբաշխումը շրջանի վարչական մյուս միավորների միջև ոչ միայն թույլ կտա վերջիններիս ապահովել կամ գոնե բարձրացնել նրանց ապահովվածության աստիճանը բարձրագույն կրթություն ունեցող անհրաժեշտ մասնագետներով, այլև կնպաստի բացասական այնպիսի երևույթի վերացմանը, ինչպիսին բարձրագույն կրթության նկատմամբ ներկայումս ձևավորված վերաբերմունքն է։ Հայտնի է, որ պարզ աշխատուժը որակյալ աշխատուժ դարձնելու համար հարկ է կատարել հասարակականորեն անհրաժեշտ ծախսումներ։ Այդ ծախսումների մեծությունը ուղիղ համեմատական է աշխատուժի որակին և կատարած աշխատանքի բարդությանը։ Մինչդեռ բարձրորակ մասնագետների նշված կոնտինգենտի որոշ մասը զբաղված է այնպիսի աշխատանքներում, ուր նման որակավորում չի պահանջվում։ Մյուս կողմից Շիրակի վարչական առանձին շրջաններ բարձրագույն կրթությամբ կադրերի, հատկապես բժիշկների և ինժեներների մեծ կարիք ունեն։

## ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ КВАЛИФИЦИРОВАННОЙ РАБОЧЕЙ СИЛЫ В ШИРАКСКОМ ЭКОНОМИЧЕСКОМ РАЙОНЕ АРМ. ССР

ВААГН ТОВМАСЯН

### Резюме

В 1970—1985 гг. уровень обеспеченности Ширакского экономического района квалифицированной рабочей силой несравненно возрос. Существенные качественные изменения произошли в структуре занятой рабочей силы, в частности сократился удельный вес педагогов, а с ускорением индустриального развития региона увеличилась доля инженеров и других специалистов смежных областей. Вместе с тем, численность квалифицированных кадров, в частности специалистов с высшим образованием, более быстрыми темпами увеличивалась в отдаленных административных районах региона.

Однако как во всей республике, так и в Ширакском районе сложилось нерациональное соотношение между специалистами с высшим и средним специальным образованием. За последнее десятилетие в регионе медленно развивалась и сеть ПТУ. Причем особого внимания требует проблема серьезного улучшения размещения указанных учебных заведений по территории района. Одной из общих задач, стоящих перед всей системой подготовки квалифицированной рабочей силы Ширакского экономического района Армянской ССР, требующих незамедлительного решения, является проблема низких темпов роста численности подготовленных квалифицированных кадров по профессиям, соответствующим требованиям современного производства и научно-технического прогресса.